Կարգապահական գործ թիվ ԿԳ-25069

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ԽԱՆՈՒՄ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Գուրգեն Թորոսյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վահե Աստվածատրյանի, Միքայել Դանիելյանի, Կարեն Խալաթյանի, Արաքս Վարդանյանի և Վահագն Քեշիշյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյանի,

մասնակցությամբ՝ դիմող Հովհաննես Սողոմոնյանի և փաստաբան Խանում Մկրտչյանի,

քննության առնելով փաստաբան **Խանում Սերյոժայի Մկրտչյանի (այսուհետև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** (արտոնագիր՝ թիվ 278), կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Հովհաննես Սողոմոնյանը **(այսուհետ նաև՝ Դիմող)**, դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետ նաև՝ Պալատ)**, հայտնել է, որ 14.09.2023թ. փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր է կնքել փաստաբան Խանում Մկրտչյանի հետ:

Դիմողը նշել է, որ Փաստաբանը, կնքած պայմանագրի համաձայն, պարտավորվել է հայցադիմում ներկայացնել դատարան և պաշտպաներ իր շահերը:

Ըստ Դիմողի՝ ծառայությունների դիմաց Փաստաբանին վճարվել է 450.000 ՀՀ դրամ,

թիվ ԿԳ-25069-2-Ա
24.09.2025թ.

սակայն վերջինս հայցադիմում դատարան չի ներկայացրել, իսկ վճարված գումարները հրաժարվել է վերադարձնել:

Դիմողը խնդրել է Փաստաբանին ենթարկել կարգապահական պատասխանատվության, ինչպես նաև խնդրել է ձեռնարկել միջոցներ գումարի վերադարձման հարցում:

Սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 09.06.2025 թվականին Դիմողին առաջարկվել է գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Դիմողը 12.06.2025թ. ներկայացրել է Փաստաբանի և իր միջև հեռախոսազանգերի և հաղորդագրությունների քաղվածքները:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները</u>.

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Խանում Մկրտչյանին առաջարկվել է՝ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետև՝ Օրենք)** 39.2-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն ներկայացնել բացատրություն Հովհաննես Սողոմոնյանի դիմումի վերաբերյալ:

Փաստաբանը 19.05.2025թ. ներկայացրած բացատրությամբ հայտնել է, որ 14.09.2023թ. պայմանագիր է կնքել Դիմողի հետ գյուղատնտեսական նշանակության հողի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման վերաբերյալ հայցի նյութերը նախապատրաստելու և գործի քննությանը մասնակցելու համար:

Փաստաբանը նշել է, որ Դիմողի փաստաթղթերը ամբողջական չեն եղել, իսկ վերջինիս հետ կապ հաստատել չի ստացվել, քանի որ նա բացակայել է ՀՀ-ից:

Փաստաբանը փորձել է կոնտակտային տվյալներ ստանալ Արագածավան բնակավայրի վարչական ղեկավարի աշխատակիցներից, սակայն նրան հայտնել են, որ Դիմողը հրաժարվել է խնդրո առարկա հողակտորից:

Ըստ Փաստաբանի՝ Դիմողը հայտնել է, որ նա հրաժարվում է ծառայություններից և առաջարկել է խզել պայմանագիրը: Փաստաբանը պահանջել է Դիմողից դիմում, որում արտացոլված կլինեն պայմանագրի դադարեցման պատճառները:

Փաստաբանը խնդրել է Դիմողից հաշվեհամար և տեղեկացրել է, որ գումարը հնարավոր կլինի վերադարձնել վերահաշվարկից հետո, ինչի հետ Դիմողը չի համաձայնվել և պայմանագրի լուծման դիմում չի ներկայացրել:

Սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով 09.06.2025 թվականին Փաստաբանին առաջարկվել է՝ Օրենքի 39.5 հոդվածի 4-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել

կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, սակայն Փաստաբանի կողմից այն նույնպես չի ներկայացվել:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 23.05.2025թ. թիվ 162-Ա/ԿԳ-25069 որոշմամբ փաստաբան Խանում Մկրտչյանի նկատմամբ **Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի**, ինչպես նաև **Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի (այսուհետև՝ Կանոնագիրք) 2.7.2, 3.5.5 և 3.8.4(1) ենթակետերի** ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

23.05.2025թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Գարիկ Հախնազարյանին (**այսուհետև՝ Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 23.07.2025թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված են համարվել սույն որոշման 5-րդ գլխի 1-6-րդ կետերում նշված փաստերը:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 23.07.2025թ.:

Հանձնաժողովի նիստերը տեղի են ունեցել 13.08.2025թ. ժամը 19:30-ին, 17.09.2025թ. ժամը 19:30-ին, 24.09.2025թ. ժամը 19:00-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբան Խանում Մկրտչյանը ստանձնել է Դիմող Հովհաննես Սողոմոնյանի իրավունքների ու շահերի պաշտպանությունը: *Նշված փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի 14.09.2023թ. կնքված փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրի պատճենով **(այսուհետև՝ Պայմանագիր)**, ինչպես նաև կողմերի բացատրությամբ:*

2. Դիմողի կողմից Փաստաբանին վճարվել է 450.000 ՀՀ դրամ: *Սույն փաստը չի*

վիճարկվել:

3. Պայմանագրի 2.1 կետի համաձայն՝ *Կողմերի համաձայնությամբ սույն պայմանագրի շրջանակներում Կատարողը Պատվիրատուին մատուցում է հետևյալ ծառայությունները՝ Կազմել հայցադիմումներ, միջնորդություններ, բողոքներ, մասնակցել գործի քննությանը՝ հողի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու վերաբերյալ քաղաքացիական գործով դատական բոլոր ատյաններում լիազորագրով տրված լիազորությունների շրջանակներում: Նշված փաստը հաստատվում է 14.09.2023թ. պայմանագրով:*

4. Փաստաբանի կողմից կազմվել է հայցադիմում, լիազորագիր, ինչպես նաև կատարվել են հարցումներ և ձեռք են բերվել համապատասխան փաստաթղթեր: *Սույն փաստը հաստատվում է 09.10.2023թ. գրությամբ, ինչպես նաև Փաստաբանի ներկայացրած փաստաթղթերի պատճեներով:*

5. Փաստաբանը խնդրել է Դիմողին ներկայանալ փաստաբանական գրասենյակ դատավարական փաստաթղթերը ստորագրելու և պետական տուրքը վճարելու համար, սակայն վերջինս չի ներկայացել: *Սույն փաստը հաստատվում է Փաստաբանի 25.10.2023թ. և 30.12.2023թ. Դիմողին ուղղված գրություններով:*

6. Փաստաբան Խանում Մկրտչյանի և Հովհաննես Սողոմոնյանի միջև 14.09.2023թ. կնքված փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիրը լուծվել է: *Սույն փաստը հաստատվում է կողմերի բացատրությամբ, ինչպես նաև նամակագրության քաղվածքով:*

7. 24.09.2025թ. Դիմողը հրաժարվել է բողոքից: *Նշված փաստը հաստատվում է 24.09.2025թ. դիմումով:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Խանում Մկրտչյանը փաստաբան է հանդիսանում 30.08.1996թ. և 2018-2025թթ ընկած ժամանակահատվածում ունի 5 կարգապահական տույժ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Խանում Մկրտչյանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2-րդ, 3.5.5-րդ և 3.8.4(1) ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթն իրականացվում է օրինականության, օրենքի և փաստաբանների պալատի առջև հավասարության, մրցակցության, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ սույն օրենքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության մեղքի բացակայության դեպքում:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *կարգապահական խախտման համար փաստաբանը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ սույն օրենքով սահմանված կարգով՝ Կարգապահական հանձնաժողովի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ուժի մեջ մտած որոշմամբ: Փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին:*

Օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ՝ առկա չէ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք:*

Ներկայացված նորմերի համադրության և վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ Օրենքով սահմանված են որոշակի վավերապայմաններ, որոնց առկայության դեպքում միայն կարգապահական վարույթի շրջանակներում կարող է քննարկվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը: Նշված վավերապայմաններ իրենց հերթին ենթադրում են փաստաբանի վարքագծում Օրենքի և Կանոնագրքի պահանջների խախտման առկայությունը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Ընդ որում, նման վավերապայմանների ամրագրումն ինքնանպատակ չէ և ըստ էության նպատակաուղղված է կարգապահական վարույթի իրականացմանը՝ օրինականության, հավասարության, մրցակցության, համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ կարգապահական վարույթի շրջանակներում

առանձնակի նշանակություն է ձեռք բերում ոչ միայն փաստաբանի կողմից որոշակի վարքագծի դրսևորման հանգամանքը, այլ նաև դրսևորվող վարքագծում Օրենքով և/կամ Կանոնագրքով ամրագրված պահանջների հնարավոր խախտման հատկանիշների առկայության հանգամանքը, որի պայմաններում միայն Հանձնաժողովը կարող է քննարկել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

Այս համատեքստում, Կանոնագրքի մի շարք դրույթների կիրառելիությունը ևս ինքնանպատակ չէ և Հանձնաժողովի կողմից այդ դրույթներով ամրագրված պահանջների հնարավոր խախտման հատկանիշների համատեքստում փաստաբանի վարքագծի քննարկման իրավական հնարավորությունն ուղղակիորեն փոխկապակցված է որոշակի պայմանների առկայության կամ բացակայության հետ:

Վերոնշյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը գտնում է, որ կարգապահական պատասխանատվության հիմք չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին դիմողի պնդումը, որը հիմնավորված չէ այնպիսի հանգամանքների վկայակոչմամբ և (կամ) ապացույցներով, որոնք հաստատապես կվկայեն փաստաբանի կողմից Օրենքի և/կամ Կանոնագրքի պահանջների խախտման կատարման մասին:

Տվյալ դեպքում, Դիմողի բողոքը փաստաբան Խանում Մկրտչյանի վերաբերյալ կայանում է նրանում, որ վերջինս պատշաճ չի կատարել ստանձնած պարտականությունները և Պայմանագիրը լուծելիս չի վերադարձրել Դիմողի 450.000 ՀՀ դրամ գումարը:

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով, պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Կանոնագրքի 2.7.2-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝*

ա. նյութերի ուսումնասիրությունը,

բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,

գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման

կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,

դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Կանոնագրքի 3.8.4-րդ ենթակետի 1-ին պարբերության համաձայն՝

1) Պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է՝ վստահորդին, կամ պատվիրատուին, կամ վստահորդի կամ պատվիրատուի կողմից լիազորված անձին վերադարձնել պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել, եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ...:

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Նշվածի հաշվառմամբ, փաստաբանի վարքագծի կանոններով փաստաբանի համար սահմանվում են որոշակի պարտականություններ, այն է՝ ելնել վստահորդի նպաստավոր շահերից, բարեխղճորեն և ժամանակին պաշտպանել վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը:

Ավելին, տրված հանձնարարության շրջանակներում փաստաբանը պետք է կիրառի օրենքով չարգելված բոլոր հնարավոր միջոցները վստահորդի շահերը լավագույնս պաշտպանելու համար: Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների կատարմանը, որոնք փաստացի արդյունավետ կարող են լինել վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ ներկայացման համար:

Վկայակոչված կանոնների վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ վստահորդի իրավունքների և օրինական շահերի արդյունավետ պաշտպանությունից բացի վստահորդի փաստաբանի համար սահմանվում են նաև այլ պարտականություններ՝ մասնավորապես, պայմանագիրը լուծելուց հետո վստահորդին վերադարձնել պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի չի կատարվել աշխատանք:

Սույն կարգապահական գործի շրջանակներում Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացված բացատրությունների և ապացույցների ուսումնասիրության արդյունքներով Հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ փաստաբան Խանում Մկրտչյանը ստանձնել է Դիմող Հովհաննես Սողոմոնյանի իրավունքների պաշտպանությունը և պարտավորվել կազմել հայցադիմումներ, միջնորդություններ, բողոքներ, մասնակցել գործի քննությանը

հողի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու վերաբերյալ քաղաքացիական գործով դատական բոլոր ատյաններում:

Ըստ կողմերի, նշված ծառայությունների համար Դիմողը վճարել է Փաստաբանին 450.000 ՀՀ դրամ:

Սույն կարգապահական գործի շրջանակներում Դիմողի կողմից չի ներկայացվել որևէ ապացույց, որի գնահատման արդյունքում ապացուցված կհամարվեր Փաստաբանի ստանձնած պարտականությունների ոչ բարեխիղճ մատուցման փաստը: Ընդհակառակը, Փաստաբանը 19.05.2025թ. ներկայացրել է իր կողմից կատարված խնդրո առարկա հողամասի վերաբերյալ հարցումների և դիմումների պատճենները, դրանց արդյունքում ձեռք բերված գործի համար անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

Բացի այդ, Փաստաբանը 25.10.2023թ. և 30.12.2023թ. Դիմողին ուղղված գրություններով խնդրել է ներկայանալ և ստորագրել հայցադիմումն ու լիազորագիրը, ինչպես նաև վճարել պետական տուրքը, սակայն Դիմողը չի ներկայացել, քանի որ գտնվել է Ռուսաստանի Դաշնությունում:

Կարգապահական Հանձնաժողովը գալիս է այն եզրահանգման, որ Փաստաբանը գործը ստանձնելուց հետո կատարել է նախնական ուսումնասիրության փուլի համար բոլոր անհրաժեշտ գործողությունները: Ավելին, Փաստաբանի կողմից հայցադիմումը դատարան չմուտքագրելը եղել է պայմանավորված Դիմողի արտերկրում գտնվելու հանգամանքով: Հետևաբար, Փաստաբանի դրսևորած վարքագիծը չի կարելի գնահատել անբարեխիղճ իրավական օգնության ցուցաբերման համատեքստում:

Միևնույն ժամանակ Հանձնաժողովն արձանագրում է, որ Փաստաբանը Դիմողին ամբողջությամբ վերադարձրել է պայմանագրով ստացած գումարը՝ չնայած իր կողմից կատարված որոշակի աշխատանքին:

Հանձնաժողովը ի գիտություն է ընդունում նաև այն հանգամանքը, որ Դիմողը հրաժարվել է իր դիմումից՝ խնդրելով այն թողնել անհետևանք:

Ողջ վերոնշված հանգամանքների հիման վրա Պալատը եզրահանգում է կատարում առ այն, որ փաստաբան Խանում Մկրտչյանը չի կարող ենթարկվել կարգապահական պատասխանատվության, քանի որ առկա չէ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքը՝ փաստաբանի վարքագծում Օրենքի և Կանոնագրքի պահանջների առերևույթ խախտումը:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասով, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով և 7-րդ մասով, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Փաստաբան Խանում Սերյոժայի Մկրտչյանի (արտոնագիր՝ թիվ 278) նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև

Կանոնագրքի 2.7.2-րդ, 3.5.5-րդ և 3.8.4(1) ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցված թիվ ԿԳ-25069 կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:*

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

թիվ ԿԳ-25069-2-Ա
24 սեպտեմբերի 2025թ.
ք.Երևան